

ՆՈՐ-ԲԱՑԱՋԵՏԻ ԳԱԻԱՌ ԿԱՄ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՒԹ

Ե. ԼԱՎԱՅԵԱՆԻ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Դ. ՌԱՏԻԿԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

ԳԻՒԶԱԼԴԱՐԱՑԻ ԳԻՒՂԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆ



իւղալղարա. հնումը՝ Ազնուածոր. — (63°6'15"—
40°8'6"). — Տարածում է համանուն գետակի
ափին, մի սքանչելի ձորակի մէջ, Բռնում է 49
դ. 2080 ք. ս. տարածութիւն և զարդարուած է
ծառերով: Դրեթէ կենարոնում բարձրանում
է մի հինաւուրց, բայց վերանորոգուած եկե-
ղեցի, ս. Աստուածածին անունով: Մի քանի
կանոնաւոր փողոցներ և գեղեցիկ, երկյարկանի
տներ աւելացնում են տեղի գեղեցկութեան տպաւորութիւնը:
Գիւղում և շրջակայքում կան եօթ գերեզմանատներ, բաւականա-
չափ խաչարձաններով և տապանաքարերով: Գետակի աջ ափին
գտնուում է «Եշխանայ վանքը», —սա սրբատաշ քարից շինուած
եկեղեցի է, որի միմիայն կիսաւեր պատերն են մնում: Վանքի
շուրջը նկատելի են ընակարանների հետքեր: Շուրջը եղած խաչ-
քարերից մինի վրայ արձանագրուած է:

'Ի թվ. 21.թ (=1290) կանգնող Յովասարս յիշէք. կա-
մաւն Այ կանգնեցաւ սուրբ խաչս իշխանութեան բարե-
պաշտ արքային Ամիր Հասանայ, բարեխաւս Շահանայ և
Միրայ՝ մաւրն և զաւակաց իւրոց. ով որ կարդէք Ած ո-
ղորմի ասէք.

Երկու խաչքարի վրայ էլ տեղացիները հասարակ քարով
մատուռ են կանգնել և թալկացող երեխաներին բերում են այս-
տեղ՝ բժշկութիւն հայցելու, այս պատճառով էլ՝ այդ մատուռները
թալալոց են կոչւում:

Մի մատուռ էլ գիւղի բարձրութե է կանգնած, մի սառնորակ աղբրի մօտ և կոչում է Թուխ-մանուկ:

Դիւղից մօտ երկու կիլոմետր հեռու դէպի արենքը ընկած է այժմ «Քաջ նահատակ» կոչուող ուխտատեղին, ուր մնում են Սընծից սուրբ Միհասայ անապատի աւերակները: Սևանայ վանքի ձեռագիրներից № 8-ի յիշատակարանից երեսում է, որ 1669 թուին Վարդենից ժողովուրդը այդ աւետարանը նուիրել է այս անապատին:

Անապատի շուրջը կան բաւական խաչքարեր, որոնցից մինը կանգնած է Ստեփանոս եպիսկոպոսի վրայ ԶԽ (=1291) թուականուով:

Այստեղից 2½ կիլոմետր հեռու կայ մի գիւղատեղի, մի աւեր եկեղեցիով, որի շուրջը եղած խաչքարերի արձանագրութիւններից ամենահինը կրում է ԶԽԳ (=1304) և ամենանորը՝ ՌՃԿ (=-1716) թուականը: Տեղացիք այս գիւղատեղուն «Բնրդի բարապայ» են կոչում:

Դիւղալբարի բնակիչները հայեր են, Ալաշկերտի Գեօլասար, Եօնճալու, Ղումլուճա, Դիղամ և Խամուր, Մըչըտլու և Ղըզըլ-դայայ գիւղերից գաղթած. ընդամէնը 453 տուն են, 1847 ար. 1707 իգ. ի միասին՝ 3554 հոգի: Դիւղի մտաւոր զարգացումը բաւական բարձր է, որովհետեւ թէ նուումը և թէ այժմ կայ զարոց:

Պարապմունքը երկրագործութիւն և անասնապահութիւն է: Ունին 2615 դ. 1440 ք. ս. գարելահող և 1959 դ. 2320 ք. ս. արօտատեղի:

Անրին Գիւղալդարա. — Գտնուում է Ներքին Գիւղալդարայից փոքր ինչ վերև, նոյն գետի ձախ ափին: Հիմնուած է 1878 թուին ալաշկերտի Քոռուն և Մուսուն գիւղերի հայ զաղթականներից: Գիւղում ուշագրութեան արժանի առանձին բան չկայ: Բնակիչները 44 տուն են, 178 ար. 177 իգ. ի միասին՝ 355 հոգի: Պարապմունքը նոյնն է:

Քեօլաղոսան. (Կելանիկրլան) (620 7' 55"—40° 9' 40"). — Տեղաւորուած է լճից հազիւ 1½ կիլոմետր հեռու, բլրակների ստորոտում, բռնում է 23 դ. 2020 ք. ս. տարածութիւն, որից միայն 18 դ. է շինութիւններով ծածկուած: Զարդարուած է ուռենիներով և ունի մի քանի կանոնաւոր փողոցներ, մի նորաշէն եկեղեցի, հինգ խանութ: Այստեղ է նաև գիւղական հասարակական դատարանը:

Գիւղի հին անունը յայտնի չէ, այժմեանը՝ Քեօլանը-զռան (Քեօլանիների ջարդատեղի) յառաջացել է այն հանգամանքից, որ լեզգիներն այս կողմերը ասպատակելիս այս տեղում կոտորել են

Թօլանի կոչուած թուրքերին, որոնցից մի քանի հոգի աղատուել են և փախել, էջմիածնի գաւառում հիմնել Թօլանլու գիւղը *):

Թեօլաղուանից մօտ երկու կիլոմետր հեռու դէպի արևելք, մի սարի գագաթին նկատելի է ամրոցի հետքեր՝ պարսպի և տների հիմքեր, և մի ստորերկրեայ անցք։ Այս ամրոցի ստորուտում, լճի մէջ ցցուած քարաժայոփ կրծքին գտնւումէ 19 տողից բաղկացած բևեռագիր արձանագրութիւնը, որը պատմում է թէ Սարդուրիի որդի Ռուսան տիրել է այս կողմերին և հարկատուդարձել 23 թագաւորներ։ շինել է պալատներ և նորոգել Տէիշը աստծու տաճարը։

Թեօլաղուանի բնակիչները հայեր են 1829 թուին Ալաշկերտի կոփ, եօնճալու, Շէյխ աղուք գիւղերից գաղթած։ ընդամենը 195 տուն, 824 ար. 759 իդ. միասին՝ 1583 հոգի։ Պարապմունքը նոյն է. ունին 1386 դ. 1200 ք. ս. վարելահող և 935 դ. 1080 ք. ս. արօտատեղի։

Վերին-Քեօլաղուան կամ Կարսիր-Խարապա։—Գտնւում է Թեօլաղուան գիւղից երկու կիլոմետր հեռու, դէպի հարաւ արևելք, մի հին գիւղատեղում, ուր կայ մի կիսաւելր եկեղեցի և բաւականաչափ կարմիր խաչքարեր, որոնցից մինի վրայ տրձանագրուած է եղել, ըստ Սմբատեանի **):

Իմ որդի (Տաճատի) հարսանիքին գործադրեցաւ երեք խալվար ալիւր. մի խալվար աղ. հինգ եզն և տասն ոչխար. երեք կառա գինի և մի կարս օղի. Սօթից մինչև Գաւառայ Գեղարքունին (Նորատուղն) հրաւիրուած էին հարսանիք. ով մեզանից քաջ է, թող այսպէս հարսանիք անի որդւոյն. Միր Ամիր։

Վերոյիշեալ արձանագրութիւնը ես չկարողացայ գտնել. իմ տեսած խաչքարերից ամենից ուշագրաւը գտնւում է եկեղեցու մէջ, ծածկուած է գեղեցիկ քանդակներով և թիկունքին կրում է հետևեալ արձանագրութիւնը։

Ածով մեք Դաւիթ էրէցս և որդիքս Սոլթան դուլի եղիշին թոռն Ղալամին որ ենք ծնունդս Սարու Ամիր-ճանին, որ բազում ջանիւ և հնարիւ բերել սարնդահանայ արեի սարին ջուրն Դախճն զթայ շինոյ շինեաց բ. ջաղաց. եթող հօրն իմ, քերցն ընդոնց։

Մի ուրիշ խաչքարի վրայ էլ գրուած է.

Ած ողորմի Սուլթան Ղիւլիին։

*) Սմբատեան. Գեղարքունի եր. 552.

**) Գեղարքունիք եր. 553.

Հաւանական է, որ այս գիւղատեղին հին վակաւեր գիւղը հղած լինի: Բնակիչները 1890 թուին թեօլաղուանից գաղթած հայեր են, ընդամենը 22 տուն, 101 ար. 98 իդ. միասին՝ 1089 հոգի:

Ներքին Ալուշալու, հնումը Մառին կթանոց. (63° 10' 20"—40° 9').—Դանուում է թեօլանի-զոսան գիւղից երեք կիլոմետր դեղի արևելք, այնպէս որ վերոյիշեալ սեպածն արձանագրութիւնը երրեմն և սրա անունով է յիշուում, թէպէտեւ աւելի մօտ է թեօլանի-զոսանին Փորուած է լճափին. լճից հաղիւ մի կիլոմետր հեռու և բռնում է 23 դ. 404 ք. ս. տարածութիւն, որից 17 դ. 670 ք. սաժէնն է շինութիւններով ծածկուած: Գիւղի մէջ առանձին ուշագրաւ բան չկայ, միայն նրա արևելեան կողմը, փոքրիկ ձորակի մէջ գտնուում է Աննվանից վանքը *):

Բնակիչները Ալաշկերտ զանազան գիւղերից 1830 թ. գաղթած հայեր են. ընդամենը 183 տուն, 756 ար. 714 իդ. իմիասին 1470 հոգի: Պարապմունքը նոյնն է: Ունին 1452 դ. 2050 ք. ս. վարելահող, 926 դ. 280 ք. ս. արօտատեղի:

Աերին-Ալուշալու, հնումը՝ Հոսպակ. — (63° 10' 50"—40° 6' 15"). — Այս թրքարնակ գիւղը կոչում է նաև Մոլլալու, որովհետև գաւառումն մոլլայութեան պատրաստուողները գալիս են այստեղ սովորելու: Գիւղը տեղաւորուած է Գիւղբէտ լեռան լանջին, միջով անցնում է մի գետակ, որ սկիզբն է առնուած Գիւղալդարա լիուից, բռնում է 16 դ. 1200 ք. ս. տարածութիւն:

Արևմտեան կողմում կայ մի կիսաւեր եկեղեցի և շուրջը բաւականաչափ խաչքարեր և քառանկիւնի տապանագարեր, որոնց վրայի տապանագրերից նշանաւոր են հետեւալները, մանաւանդ այս առաջինը՝ ուր յայտնուած է գիւղի հին անունը.

Հանգիստ Միք Աղին, իւր կողակից Շաբային. հաւըն Բարսեղ քահանային. Եղբաւըն Ղայիր խանին, գիւղն Հոսպակ:

Ես Մուրատ կանգնեցի սուրբ խաչս բարեխաւս Միլդիս թվ. Զթ. (=1460).

Այս է հանգիստ Հախնազարի որդի Ամիրխանին թվ. ԶԴ. (=1541).

Այս է հանգիստ Մկրտչին. ողորմի ասացէք թվ. Ռ. (=1551).

*.) Տես նշանաւոր վանքերի նկարագրութեան մէջ:

Սուրբ խաչս բարեխաւս Մարենին կողակից Փաշա-
յին թ. Ռժելբ (—1693).

Սուրբ խաչս բարեխաւս Պապի որդի Փասարային:
Բնակիչները՝ շիա թուրքեր՝ 96 տուն են. 482 ար. 356 իգ.
միասին՝ 838 հոգի: Պարապմունքը նոյնն է: Ունին 1376 դ. 970
ք. ս. վարելահող և 133 դ. 2070 ք. ս. խոտատեղի, 863 դ. 1715
ք. ս. արօտատեղի:

Դ-ը ըլլ-փանք. (630 16' 50"—400 7' 37").—Թրքաբնակ մի ան-
նշան գիւղ է լեռան լանջին, իւր առաջ ունենալով մի սքան-
չելի տեսարան: Գիւղի ծայրին բարձրանում է Մարենեաց հըռ-
չակաւոր վանքը *), կիսակործան և անխնամ: Վանքի մօտից հո-
սում է մի յստակ, լեռնային գետակ, որ կրում է գիւղի անունը
և գնում թափում Սևանայ լիճը: Բնակիչները, շիա թուրքեր,
99 տուն են, 387 ար. 346 իգ. միասին՝ 733 հոգի: Պարապմունքը
նոյնն է:

Գեղակ-բուլաղ. (63°14'40"—40°10').—Գիւղը իւր անունը՝
Կարճ-աղբիւր՝ ստացել է այն հանգամանքից, որ սրա մօտից մի
սաստիկ յորդ աղբիւր է բղխում և միայն երեք մետր տարածու-
թիւն անցնելով թափում է Սևանայ լիճը: Գիւղը տեղաւորուած
է լճից փոքր ինչ բարձր, ձորակի լանջին, որի միջով հոսում է
մի գետակ: Գիւղում կայ մի հին եկեղեցի, երկու հասարակ մա-
տուռ և մի քանի հին խաչքար:

Բնակիչները հայեր են, 1830 թ. Ալաշկերտի Լաթար, Կոփ և
այլ գիւղերից զաղթած. Ընդամենը 121 տուն, 589 ար. 528 իգ.
միասին 1117 հոգի: Պարապում են երկրագործութեամբ և անաս-
նապահութեամբ: Այս և Բասարկեչարի հասարակութեան Վերին
Չաղալու, Ներքին Չաղալու, Ղանլի-Ալլահիերդի, Կեարկիրաշ, Սու-
րատան, Տիւսկուլու և Գեօղալրարայի հասարակութեան Ղըզը-
վանք, Չամուրլու և Եարփուղու գիւղերի, ինչպէս և Կիր Կոչուած
տեղի հողերը միասին են չափուած և ցուցակագրուած. Ընդամենը
69 դ. 1344 ք. ս. գիւղատեղի է, 8202 դ. 2120 ք. ս. վարե-
լահող, 1427 դ. 1792 ք. ս. խոտատեղի, 2149 դ. 1224 ք. ս. ա-
րօտատեղի: 18 դեսիարին 480 ք. ս. էլ բռնուած է ջրով, որից
9 դ. 720 ք. ս. ջրանցքների, 6 դ. 1200 ք. ս. գետակի և 2 դ.
960 ք. ս. լճի տակ:

Գետակ-բուլաղ գիւղի հարաւային կողմում, չորս կիլոմետր
հեռու, գտնուում է մի գիւղատեղի, որ տեղացիներից կոչում է

*.) Տես նշանաւոր վանքերի նկարագրութեան մէջ:

կարմիր խարապաւ: Այստեղ ևս կայ մի հայկական աւեր եկեղեցի և մի քանի խաչքար:

Գեօտակ-բուլաղից դէպի արևելք, մի ընդարձակ դաշտավայրի վրայ գտնուում է մի հին քաղաքի հիմնապատեր: Տեղացիները այս տեղը կոչում են, «Տաշ-դափու», և առաջ թէ ինչն: Այստեղ կայ մի մատուռ՝ 2 մետր երկարութեան, 1,50 մետր բարձրութեան, մի ժամանակ մեծ մեծ սալա-քարերով ծածկուած: Սրա մէջ, միայն հարաւային կողմում, կան երկու խաչքար, որոնցից մինի վրայ կարդացում է թվ. ՇՊ (=604), իսկ միւսի վրայ թվին ՂԹ (=650 թ.): Այս մատուռից մի նրբանցք տանում է մի ուրիշ մատուռ: Նրբանցքի գուռը քարից է, որից և յառաջացել է այս աւերակի անունը՝ Տաշզափու՝ Քարադրուն: Այս քարէ դռան բարձրութիւնն է 1,10 մետր, լայնութիւնը 0,36 մետր և հաստութիւնը 0,18 մետր: Միւս մատուռան արևելքան կողմը կամ երեք խաչքար առաջներում մի մի տապանաքար: Այս խաչքարերից մինի վրայ գրուած է թվին ՆԽ (=991): Այս մատուռը ևս ունեցել է մի նոյնպիսի քարէ գուռն, սակայն այժմ կոտրատուած, ընկած է վայր:

Բազմաթիւ տների և 2 ձիթահանքի հիմնապատեր և քարակառականեր նկատելի են այս ու այն կողմում:

Այստեղից փոքր ինչ հեռու, բարձր րիբի գագաթին կայ մի հինաւուրց ամրոց, պարսպապատ: արևմտեան կողմից հոսում է եարփուղու գետը, հիւսիսային կողմը տարածւում Մեանայ լիճը, միւս երկու կողմերումն էլ ձգուում են ձորակներ: Ամրոցի մէջ կայ հայ երկու կիսաւեր եկեղեցի, շուրջը գերեզմանատուն:

Եարփուղու, հոսումը Դաղձանց:—(630' 16"–40° 9' 6")—Մի փոքրիկ գիւղ է, այժմ թրքարնակ: Այստեղ կայ մի աւեր եկեղեցի, շուրջը խաչքարեր՝ առանց տապանագրերի: Բնակիչները շիաթուքքեր են 98 տուն. 372 ար. 347 իգ. միասին 719 հոգի: Պարագում են երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Սրանց հողը հաշուած է Գեօտակ-բուլաղի հասարակութեան հողերի հետ:

Զամուրդու:—(630' 15"–40° 6' 52").—Մի աննշան, թրքարնակ գիւղ է, 62 տուն բնակչով, 261 ար. 230 իգ. միասին 491 հոգի:

Հօրգլու:—Մի աննշան, փոքրիկ գիւղ է, Ներքին Ալուչալուից 5—6 կիլոմետր դէպի հարաւ: Այստեղ կայ մի կիսաւեր եկեղեցի և մի մատուռ: Բնակիչները քրդեր են, 34 տուն, 176 ար. 172 իգ. միասին 348 հոգի: Պարագում են անասնապահութեամբ և երկրագործութեամբ:

Կիզիլ-խարապա երկրորդ:—Թրքարնակ մի աննշան գիւղ է, 130 տուն բնակչով, 461 ար. 456 իգ. միասին 917 հոգի: